«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» 03 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Է. Թունյան

N ԳԲԽ-05/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից 18.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ն (այսուհետև՝ նաև Ընկերություն) հայտնել է հետևյալը.

2014 թվականի փետրվարի 18-ին Ընկերության կողմից ներկայացված բողոքում նշված փաստերից երևում է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 26-րդ հոդվածի 1-ին մասի, այս վերջինի հետ կապված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի և 25-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջները, և բոլորովին չի համապատասխանում այն, որ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի վերջինս պետական մրցույթից դուրս է մնացել հետևյալ պատճառնելով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք, և ըստ Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Ընկերությունը նշել է, որ այն փաստը, որ եթե հրավերի մեջ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն նշում է առաջարկը ներկայացնելու վերջնաժամկետը տոնական օր էր, Ընկերությանը մյուս՝ տեղական մասնակիցների համեմատությամբ, դրել է անհավասար պայմանների մեջ, քանի որ անշուշտ արտասահմանյան ընկերությունը հաստատ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրացույցից տեղյակ չի լինի: Այս իմաստով, հրավերում նշել վերջնաժամկետ, որն այնուհետև չեն պահպանելու, քանի որ դա տոնական օր է, պետք է հանգեցներ գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, քանի որ ստեղծված անորոշությունն այն մասին, թե որն է լինելու ճշգրիտ ամսաթիվը, կարող էր բերել նրան, որ որևէ մասնակից, տեսնելով, որ չի կարողանա ներկայացնել իր առաջարկը ժամանակին, այն չի ներկայացնի, երբ արդյունքում էլ պարզվում է, որ վերջնաժամկետն էլ ամսի 27-ը չէ, այլ ամսի 29-ն է: Մասնավորապես, «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի պարագայում սա բերել է նրան, որ վերջինիս անարդար կերպով մրցույթից դուրս են թողել, այսպիսով վերացնելով մրցունակությունը, քանի որ դուրս մղելով Ընկերությանը, մյուս մասնակիցը, պատահաբար շահում է մրցույթը:

Հաշվի առնելով, որ վեջնաժամկետը 2014 թվականի հունվարի 29-ն է, հրավերի մասին պարզաբանում ստանալու ամսաթիվն է 2014 թվականի հունվարի 24-ը:

Ընկերությունը փաստաթղթերով հաստատել է, որ 2014 թվականի հունվարի 24-ին գրավոր կերպով դիմել է վերջնաժամկետի հետ կապված պարզաբանում ստանալու համար, քանի որ DHL փոստային առաքումների ընկերության միջոցով տեղեկացել է, որ Հայաստանում հունվարի 27-ը և 28-ը տոնական, ոչ աշխատանքային օրեր են: Ընկերությունը նշել է, որ իրավունք ուներ պատասխան ստանալ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի, սակայն «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն վերջանաժամկետի հետ կապված ոչ մի պարզաբանում չի տրամադրել:

Չնայած այն հանգամանքին, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն վերջանաժամկետի հետ կապված ոչ մի պարզաբանում չի տվել ու Ընկերությունը հետաքրքրություն էր ցուցաբերում «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» բաց ընթացակարգին մասնակցելու հանդեպ, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին 2014 թվականի հունվարի 24-ին տեղեկացնում է, որ Ընկերության ներկայացուցիչը անձամբ կճամփորդի Հայաստան, որպեսզի ձեռամբ հանձնի Ընկերության առաջարկը, չնայած այն հանգամանքին, որ միևնույն առաջարկն ուղարկվել է նաև DHL-ով:

Ընկերությունը նշել է նաև, ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Ընկերությանը մրցույթին մասնակցելուց զրկելը բացարձակ խոչընդոտ է:

Ըստ նշված հոդվածի՝ արգելվում է միևնույն անձի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, այսինքն արգելվում է, որ միևնույն անձի երկու տարբեր ընկերություններ մասնակցեն միևնույն գնման գործընթացին:

Ընկերությունը գտնում է, որ ակնհայտ է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը վերջինիս վերաբերել չի կարող, քանի որ «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ին պատկանող երկու տարբեր ընկերություններ չեն, որ առաջարկ են ներկայացրել, այլ միակ ընկերությունը ներկայացրել է միևնույն առաջարկի երկու կրկնօրինակ, ինչի մասին գրավոր կերպով ծանուցել է ինչպես «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին նախապես, այնպես էլ այն ժամանակ, երբ Ընկերության ներկայացուցիչն անձամբ եղել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի շենքում:

Ընկերությունը նշում է, որ եթե ցանկանար իր առաջարկում որևէ փոփոխություն մտցնել, ապա դա կաներ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ

մասի, ինչպես նաև Հրավերի 5.3 կետի, ինչպես նաև, եթե ցանկանար միանգամայն տարբեր առաջարկներ ներկայացնել, կվերցներ մեկը, մյուսը ներկայացնելու համար, բայց այս պարագայում այդպես չի եղել:

Ընկերությունը ներկայացրել է միայն մեկ առաջարկ, որը հասել է երկու տարբեր ծրարներով, միայն «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին հայտնի պատճառներով: Ընկերությունն առաքման ծառայության միջոցով ուղարկել է իր առաջարկը, և երբ տեղեկացել է, որ Հայաստանում հունվարի 27 և 28-ը տոնական, ոչ աշխատանքային օրեր են, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ից վերջնաժամկետի հետ կապված պարզաբանում է պահանջել՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի: Քանի որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն վերջնաժամկետի հետ կապված պարզաբանում չի տվել, Ընկերությունը տեղեկացրել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին, որ իր ներկայացուցչին է գործուղում Հայաստան՝ անձամբ հանձնելու այն նույն առաջարկը, որը կհասնի նաև DHL ընկերության միջոցով:

Ընկերության պնդմամբ, ըստ վերոնշյալի պարզ է դառնում, որ «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» բաց ընթացակարգի հրավերի մեջ սխալ տեղեկատվություն կար վերջնաժամկետի հետ կապված, որն էլ Ընկերությանը մյուս մասնակիցների հետ համեմատ անհավասար պայմաններում է դրել, սրանով էլ չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որոնք անշուշտ բերել են նաև մրցակցության չարդարացված խոչընդոտների, այսպիսով նաև չկատարելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները:

Այս ամենը միասին, ինչպես նաև այն, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն Ընկերության խնդրած պարզաբանումը չի տվել, որը նախատեսված էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք է հանդիսացել որպեսզի Ընկերությունը բաց ընթացակարգի հրավերից դուրս մղվի, որի պատճառը, ենթադրվում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը չկատարելն է, որի արդյունքը նկարագրված փաստերը իրականության հետ կապված կիրառելը չէ:

Բողոքը քննող հանձնաժողովին «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ն խնդրում է, որպեսզի բողոքարկման հետ միասին ընդունի և չեղյալ հայտարարի Ալմոնդ ընկերության օգտին կայացված որոշումը, որպեսզի նոր ժամկետ սահմանվի առաջարկների ներկայացման համար, որպեսզի «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության

ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի առաջարկը նույնպես դիտվի մյուս մասնակիցների առաջարկների հետ հավասար պայմաններով:

2. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.02.2014թ. N 09/032-316 գրությամբ դիմել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 18.02.2014թ. «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն 25.02.2014թ. N 8.1-83 գրությամբ «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կարիքների համար բաց ընթացակարգի միջոցով ՕԵԿ կարգավարների ընդհանուր մասնագիտական և վթարային իրավիճակներում հատուկ վարժանքի կազմակերպման ծառայությունների գնումն իրականացնելու նպատակով ընկերության գլխավոր տնօրենի 17.12.2013թ-ի թիվ 293 հրամանով «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կազմավորվել է պատասխանատու ստորաբաժանում:

«ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով բաց ընթացակարգի միջոցով գնումը կազմակերպելու նպատակով «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 19.12.2013թ. թիվ 298 հրամանով ձևավորվել է գնահատող հանձնաժողով, որն իր 29.01.2014թ. նիստում ընթացակարգի մասնակից «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի հայտը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն գնահատել է անբավարար և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մերժել է:

Պատվիրատուն գտնում է, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի 19.12.2013թ. թիվ 298 հրամանով ձևավորված «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման դեմ «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից «Գնումների աջակցման

կենտրոն» ՊՈԱԿ-ին 18.02.2014թ. ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա չէ բավարարման հետևյալ պատճառաբանություններով.

Բողոքաբեր կազմակերպությունը իր բողոքում նշել է, որ Պատվիրատուի կողմից հայտերի բացման նիստի օրվա տեղափոխումը անհավասար պայմանների մեջ է դրել բողոքաբեր կազմակերպությանը մյուս տեղական մասնակիցների համեմատությամբ, մինչդեռ.

ա. «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով ընթացակարգին Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպություն չի մասնակցել,

բ. հայտերի բացման նիստի օրվա տեղափոխումն ըստ էության հնարավորություն է տվել բողոքաբեր կազմակերպությանը ներկայացնելու գնման ընթացակարգի հայտ, որը, իսկ ավելի ճիշտ՝ որոնք, ներկայացվել են 29.01.2014թ., հետևաբար, եթե հայտերի բացման նիստը տեղի ունենար ոչ թե 29.01.2014թ., այլ 27.01.2014թ, ինչպես նախատեսված էր Հրավերի հրապարակման ժամանակ, ապա բողոքաբեր կազմակերպությունն ընդհանրապես չէր կարողանա ներկայացնել գնման ընթացակարգի հայտ:

Պատվիրատուի կարծիքով հայտերի բացման նիստի օրվա տեղափոխումն ակնհայտորեն բխում էր բողոքաբեր կազմակերպության շահերից, ուստի վերջինիս պնդումը անհավասար պայմանների վերաբերյալ ակնհայտորեն անհիմն է:

գ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329 հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83 հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Հետևաբար, հայտերի բացման նիստի օրվա տեղափոխումն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջների կատարմամբ և ի ապահովումն դրանց:

Գնման ընթացակարգի Հրավերը սահմանում է. «Ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական, ֆիզիկական և պաշտոնատար անձինք պարտավոր են կատարել նույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած իրավական ակտերի պահանջները՝ անկախ այն հանգամանքից, թե այդ իրավական ակտերը նրանք պաշտոնապես կամ ընդհանուր կարգով են ստացել, ինչպես նաև դրանց ընդունման կամ ուժի մեջ մտնելու մասին նրանք

իրազեկվել կամ տեղյակ են եղել, թե ոչ, եթե օրենքով կամ այլ տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Այսպիսով, բողոքաբեր կազմակերպության տեսակետը՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետի հետ կապված անորոշության առկայության վերաբերյալ, չունի որևէ իրավական հիմք և տրամաբանություն:

2. Բողոքաբեր կազմակերպության բողոքի առանցքում դրված՝ գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետի 2014թ. հունվարի 27-ը 29-ին տեղափոխելու փաստարկը, Պատվիրատու պնդմամբ չունի որևէ էական նշանակություն հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Բաց ընթացակարգի դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի քառասուն օրացուցային օրից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման պահից»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և ընթացակարգի հրավերի 4.3 կետի համաձայն՝ մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը,

բ) գնային առաջարկ,

գ) հայտի ապահովում,

դ) էլեկտրոնային փոստի հասցեն,

ե) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նշված փաստաթղթերի տիպային օրինակները ներկայացված են հրավերի համապատասխան հավելվածներում: Պատվիրատուի պնդմամբ ակնհայտ է, որ հայտերի ներկայացման 40-օրյա ժամկետը լիովին բավարար է հայտերի պատշաճ և ժամանակին ներկայացնելու համար, և բողոքաբեր կազմակերպության պնդումը՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը 2014թ. հունվարի 27-ից 29-ը տեղափոխելու հետևանքով գնման ընթացակարգին պատշաճ մասնակցության հնարավորության բացակայության վերաբերյալ, մտացածին է և արհեստական:

3. Ինչ վերաբերում է բողոքի այն մասին, համաձայն որի բողոքաբեր կազմակերպությանը չի ներկայացվել պարզաբանում հայտեր ներկայացնելու վերջնաժամկետի վերաբերյալ, Պատվիրատուն նշել է, որ գնման ընթացակարգի Հրավերում

որպես հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված է 27.01.2014թ., իսկ պարտավորությունների կատարման ժամկետների հաշվարկման կարգը սահմանված է իր կողմից նեկայացված գրության 1-ին կետի «գ» ենթակետում նշված իրավական ակտերում, և ակնհայտ է, որ նշված խնդրի կանոնակարգումը չի մտնում Հրավերի բովանդակության մեջ, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է նույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից»:

Պատվիրատուն գտնում է, որ նշված խնդրի վերաբերյալ պարզաբանումը վերաբերում է մասնագիտական իրավաբանական խորհրդատվությանը, իսկ «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով գնահատող հանձնաժողովը, որը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պարտավոր է ներկայացնել հրավերի վերաբերյալ պարզաբանում, չունի անհրաժեշտ մասնագիտական իրավաբանական գիտելիքներ, ինչպես չունի դրանք ունենալու պարտավորություն: Ավելին, «Գնումների մասին» ՀՀ օրենքը սահմանում է մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու իրավասություն ունեցող մարմնի և այդ խորհրդատվության տրամադրման կարգի վերաբերյալ համապատասխան դրույթներ:

Այսպիսով, Պատվիրատուն գտնում է, որ բողոքաբեր կազմակերպության հարցումը դուրս է Հրավերի բովանդակության շրջանակից, միևնույն ժամանակ վերջինս զրկված չէր նշված հարցի վերաբերյալ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն ստանալու հնարավորությունից և նշում է, որ նշված հարցի վերաբերյալ բողոքաբեր կազմակերպության շահարկվող անդրադարձը կրում է ձևական, և ոչ թե բովանդակային բնույթ:

4. 29.01.2014թ. ժամը 10:45 «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի լիազորված անձի կողմից գնման ընթացակարգի քարտուղար Հ. Հակոբյանին առձեռն հանձնվել է ծրար, որը գրանցվել է գրանցամատյանում: Նույն օրը ժամը 11:55 փոստային առաքմամբ ստացվել է ևս մեկ ծրար վերոնշյալ կազմակերպության կողմից: Ժամը 12:00 գնահատող հանձնաժողովը սկսել է իր աշխատանքները: Քանի որ «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից ստացվել էր երկու ծրար, նիստը կասեցվել է՝ առաջացած խնդրի լուծման համար անհրաժեշտ

մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով: 29.01.2014թ. ժամը 14:20 հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքում նշված հարցի վերաբերյալ հստակ ձևակերպումների բացակայությունը, գնումների համակարգող Հ. Հակոբյանը մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով հեռախոսազանգով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նույն գնման ընթացակարգին միևնույն կազմակերպության կողմից ներկայացված երկու ծրարների ներկայացման դեպքում գնահատող հանձնաժողովի գործողությունների վերաբերյալ: «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ից նշված հարցին ի պատասխան խորհուրդ է տրվել ծրարները չբացել, իսկ հայտը մերժել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն:

Բողոքաբեր կազմակերպությունը մեկնաբանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը կարծիք է հայտնել, որ իրավանորմում խոսքը գնում է միևնույն անձի հիմնադրած երկու տարբեր ընկերությունների՝ միևնույն գնման գործընթացին մասնակցելու վերաբերյալ, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերոպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ եթե իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից:

Պատվիրատուն նշել է, որ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնակարգումները, կարելի է վստահորեն հանգել այն եզրակացության, որ միևնույն կազմակերպության կողմից նույն գնման գործընթացին միաժամանակյա մասնակցությունը, որն այս դեպքում արտահայտվել է միևնույն գնման ընթացակարգին 2 փաթեթ ներկայացնելու միջոցով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով արգելվում է:

Ի լրումն վերոնշյալի, Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ բաց ընթացակարգի արդյունքներով 17.02.2014թ. կնքել է ՕԵԿ կարգավարների

ընդհանուր մասնագիտական և վթարային իրավիճակներում հատուկ վարժանքի կազմակերպման ծառայությունների մատուցման թիվ 6.12 պայմանագիրը, որի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 17.02.2014թ. հրապարակվել է համապատասխան հայտարարություն:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն 03.03.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած N 8.1-91 գրությամբ լրացուցիչ փաստարկներ է հայտնել ԳԲԽ-05/14 բողոքի շրջանակներում իրականացված բանավոր լսումների ընթացքում բողոքարկման խորհրդի քննարկմանն արժանացած հետևյալ 2 հանգամանքների վերաբերյալ.

ա) բողոքաբեր կազմակերպությանը Պատվիրատուի կողմից հայտեր ներկայացնելու վերջնաժամկետի վերաբերյալ պարզաբանում չտրամադրելը, և

բ) բողոքաբեր կազմակերպության հայտերի մերժման իրավաչափությունը:

Մասնավորապես, Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

1. Հրավերի պարզաբանման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով, որի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Բողոքաբեր կազմակերպությունը, պարզաբանման համար էլեկտրոնային փոստով Պատվիրատուի գնման համակարգողին դիմել է 2014թ. հունվարի 24-ի ժամը 16:46 (Երևանի ժամանակով): Դրան հաջորդող երեք օրացուցային օրերը «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի թիվ 1265-Ն որոշման համապատասխան դրույթների համաձայն հանդիսանում էին ոչ աշխատանքային:

Պատվիրատուն նշել է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-330-րդ հոդվածների և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-84-րդ հոդվածների պահանջների, մասնակցի հարցման վերաբերյալ պարզաբանում պարտավոր էր

տրամադրել 2014թ. հունվարի 29-ին մինչև ժամը 18:00-ն: Գնման ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2014թ. հունվարի 29-ի ժամը 12:00-ին, ուստի Պատվիրատուի պնդմամբ մասնակցի հարցման վերաբերյալ պարզաբանում տրամադրելը կարող էր դիտվել միայն որպես ձևական մոտեցում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարզաբանման բովանդակությունը արդեն իսկ կորցրել էր իր արդիականությունը, և չէր կարող որևէ փաստական և/կամ իրավաբանական նշանակություն ունենալ մասնակցի համար:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն բողոքարկման խորհրդի ուշադրությունն է հրավիրել նաև հետևյալ փաստերի վրա.

ա) բողոքաբեր կազմակերպության կողմից Պատվիրատուին 2014թ. հունվարի 24-ի ժամը 16:46-ին ներկայացված գրության մեջ հարցադրումը հետևյալն էր. «Արդյո՞ք «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն բաց է երկուշաբթի, թեև այն տոնական օր է»: Մինչդեռ իր բողոքում բողոքաբեր կազմակերպությունը վերոնշյալ հարցը ներկայացրել է իբրև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի վերաբերյալ պարզաբանման հարցում: Ակներև է, որ կազմակերպության՝ ոչ աշխատանքային օրը բաց լինելու և հայտերի ներկայացման վերջնաժամկետի վերաբերյալ հարցադրումները նույնական չեն: Պատվիրատուն նշել է, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն շուրջօրյա ռեժիմով աշխատող կազմակերպություն է, ինչը թերևս չի նշանակում, որ նույն ռեժիմով են աշխատում նաև գնումների համակարգողները և գնահատող հանձնաժողովի որոշ անդամներ:

բ) բողոքարկման խորհրդի որոշման անաչառության և օբյեկտիվության ապահովման նպատակով, վերջինս պետք է ուշադրությանն արժանացնի բողոքաբեր կազմակերպության պարզաբանման վերաբերյալ հարցման լեզվին (այն կատարվել է անգլերեն լեզվով), հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ գնմանը վերաբերող փաստաթղթերի լեզվին ներկայացվող պահանջները:

2. Բողոքաբեր կազմակերպության կողմից ներկայացված հայտի (հայտերի) մերժման իրավաչափության վերաբերյալ Պատվիրատուն նշել է հետևյալը.

- բողոքաբեր կազմակերպությունն իր բողոքում նշել է, որ ներկայացրել է միևնույն առաջարկի երկու կրկնօրինակ, ինչի մասին գրավոր ծանուցել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին: Չանդրադառնալով այն փաստին, որ համաձայն Հրավերի 2-րդ գլխի 5.1 կետի առաջին պարբերության՝ ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմվեն բնօրինակից, իսկ բողոքաբեր կազմակերպությունը իր բողոքում նշել է, որ դրանք

կրկնօրինակներ էին, ինչն արդեն իսկ Հրավերի պայմանների խախտում էր, ինչի հիման վրա Պատվիրատուն կարող է միայն արձանագրել, որ բողոքաբեր կազմակերպությունը չի ներկայացրել իր կողմից մատնանշված գրավոր ծանուցումը հավաստող որևէ հիմք:

Պատվիրատուն պնդում է, որ բողոքաբեր կազմակերպության պնդումն այն մասին, որ վերջինս տեղյակ է պահել Պատվիրատուին, որ իր կողմից գնման ընթացակարգին ներկայացված երկու հայտերը նույնական են, ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը և հիմնավորված չէ:

Նույնիսկ այն դեպքում, եթե բողոքաբեր կազմակերպությունը, իր չհիմնավորված պնդմամբ, ներկայացրել է երկու նույնական հայտ, վերջինս, տեղեկանալով DHL-ի կողմից, իր՝ փոստով առաքված հայտը ոչ պատշաճ ժամանակին Պատվիրատուին հանձնելու հավանականության մասին, հնարավոր շփոթությունից խուսափելու համար, կարող էր հետ կանչել փոստով առաքված հայտը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքաբեր կազմակերպությունը որոշել էր հայտն իր աշխատակցի միջոցով ուղարկելու և Պատվիրատուին առձեռն հանձնելու մասին: ԳԲԽ-05/14 բողոքի շրջանակներում բանավոր լսումների ընթացքում բողոքաբեր կազմակերպության ներկայացուցիչը նշեց, որ բողոքաբեր կազմակերպությունը կարող էր հետ կանչել իր փոստով առաքված հայտը, սակայն դա չի արել:

Պատվիրատուն գտնում է, որ ակնհայտ է, որ բողոքաբեր կազմակերպությունը կարող էր հետ կանչել փոստով առաքված հայտը, հաշվի առնելով, որ արդեն իսկ գործուղել էր իր աշխատակցին՝ հայտը առձեռն Պատվիրատուին հանձնելու համար, սակայն անհայտ պատճառներով դա չի արել՝ ստեղծելով արհեստական արգելքներ գնահատող հանձնաժողովի բնականոն աշխատանքի համար:

Հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքում նշված հարցի վերաբերյալ հստակ ձևակերպումների բացակայությունը, Պատվիրատուն՝ մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով հեռախոսազանգով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նույն գնման ընթացակարգին միևնույն կազմակերպության կողմից ներկայացված երկու ծրարների ներկայացման դեպքում գնահատող հանձնաժողովի գործողությունների վերաբերյալ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Գնումների աջակցման կետրոն» ՊՈԱԿ-ը տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն՝ պատվիրա-տուներին անվճար, իսկ մասնակիցներին և այլ անձանց՝ վճարովի: Նշված հարցին ի

պատասխան Կենտրոնի կողմից խորհուրդ տրվեց ծրարները չբացել՝ իսկ մասնակցի հայտը մերժել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Պատվիրատուն նշել է, որ նույնիսկ այն դեպքում, եթե բողոքարկման խորհուրդը, հաշվի չառնի վերջինիս փաստարկները բողոքաբեր կազմակերպության հայտերի չբացման իրավաչափության վերաբերյալ և հանգի այն եզրակացության, որ միևնույն կազմակերպության կողմից նույն գնման գործընթացին միաժամանակյա մասնակցությունը, որն այս դեպքում արտահայտվել է միևնույն գնման ընթացակարգին 2 փաթեթ ներկայացնելու միջոցով, արգելված չէ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, ավելին՝ թույլատրելի է, ակնհայտ է, որ Պատվիրատուն ձեռնարկել է իրենց կախված անհրաժեշտ միջոցները՝ խնդրահարույց հարցի վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվությունը ստանալու և իրավասու մարմնից ստացված խորհրդատվությունը կիրառելու ուղղությամբ, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիշատակված նորմերի ուժով անմեղ է, ուստի չի կարող ենթարկվել որևէ պատասխանատվության:

Պատվիրատուն գտնում է, որ բողոքարկման խորհրդի կողմից քննարկվող հարցում Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի գործողությունները ոչ իրավաչափ գնահատելու դեպքում, խորհուրդը՝ իր որոշման հիմնավորվածության, օբյեկտիվության և անաչառության սկզբունքներից ելնելով, պետք է հստակեցնի, թե ինչպիսի որոշում պետք է ընդուներ Պատվիրատուն՝ միևնույն կազմակերպության կողմից նույն գնման գործընթացին միաժամանակյա մասնակցության դեպքում, վկայակոչելով կիրառելի իրավական ակտի համապատասխան դրույթները:

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի տնօրենին հասցեագրված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 20.02.2014թ. թիվ 09/032-316 գրությամբ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն տեղեկացել է, որ «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է 18.02.2014թ.: Բողոքի ստացման նույն ժամկետն է նշված նաև բողոքի ներկայացման վերաբերյալ համապատասխան հայտարարության մեջ (կայքում հրապարակվել է 19.02.2014թ.): Վերոնշյալ գրությանը կից ներկայացված բողոքում բողոքաբեր կազմակերպությունը խնդրել է. «Չեղյալ հայտարարել Ալմոնդ ընկերության օգտին կայացված որոշումը, որպեսզի նոր ժամկետ սահմանվի առաջարկների ներկայացման համար, որպեսզի SENASA-ի առաջարկը նույնպես դիտվի մյուս մասնակիցների առաջարկների հետ հավասար պայմաններով»: Պատվիրատուն գտնում է, որ վերոշարադրյալից ակնհայտ է, որ բողոքաբեր կազմակերպությունը բողոքարկում է գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշումը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին»:

Պատվիրատուն հայտնել է, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ բաց ընթացակարգի արդյունքներով 17.02.2014թ. կնքել է թիվ 6.12 պայմանագիրը, որի վերաբերյալ նույն օրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակել է համապատասխան հայտարարություն: Պատվիրատուի պնդմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ նորմի համաձայն բողոքաբեր կազմակերպությունը չէր կարող 18.02.2014թ. բողոք ներկայացնել պատվիրատուի գնահատող հանձնաժողովի որոշումների դեմ՝ հաշվի առնելով, որ գնման պայմանագիրը արդեն իսկ կնքվել էր 2014թ. փետրվարի 17-ին, այսինքն բողոքի ներկայացման պահից մեկ օր առաջ:

Ելնելով վերոգրյալից, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն խնդրել է «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը համարել չհիմնավորված և ամբողջությամբ մերժել:

3. ԳԲԽ-05/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-05/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կենտրոն) ուսումնասիրելով «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Բողոքաբեր ընկերություն) կողմից 18.02.2014թ. ներկայացված բողոքը, «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ Հրավեր), գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 29.01.2014թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 4 արձանագրությունը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից (այսուհետև՝ Պատվիրատու) Կենտրոնին 25.02.2014թ. և 03.03.2014թ. ներկայացված NN 8.1-83 և 8.1-91 գրությունները, հայտնում է հետևյալը.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից ՕԵԿ կարգավարների ընդհանուր մասնագիտական և վթարային իրավիճակներում հատուկ վարժանքի կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

«Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ն 10.02.2014թ. Կենտրոնին է ներկայացրել «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ալմոնդ» ընկերության օգտին կայացված որոշումը չեղյալ հայտարարելու պահանջի մասին բողոք:

Կենտրոնը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը, 13.02.2014թ. N 09/032-231 գրությամբ դիմել է Բողոքաբեր ընկերությանը և հայտնել, որ ներկայացված բողոքը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջներին՝ առաջարկելով հնգօրյա ժամկետում վերացնել բողոքում առկա թերությունները և Կենտրոնին ներկայացնել բողոք:

1. «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ն 18.02.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ գրավոր (էլեկտրոնային) կերպով դիմել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ին

հայտերի ներկայացման վերջնաժամկետի հետ կապված պարզաբանում ստանալու համար, քանի որ տեղեկացել է, որ 2014 թվականի հունվարի 27-ը և 28-ը Հայաստանում ոչ աշխատանքային օրեր են, սակայն որևէ պարզաբանում չի ստացել, ինչը Բողոքաբեր ընկերության համար ստեղծել է մրցակցության անհավասար պայմաններ:

Պատվիրատուն 25.02.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 8.1-83 գրությամբ հայտնել է, որ գնման ընթացակարգի հրավերում որպես հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված է 27.01.2014թ., իսկ պարտավորությունների կատարման ժամկետների հաշվարկման կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83 հոդվածներով և ակնհայտ է, որ նշված խնդրի կանոնակարգումը չի մտնում Հրավերի բովանդակության մեջ, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է նույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Պատվիրատուն հայտնել է, որ նշված խնդրի վերաբերյալ պարզաբանումը վերաբերում է մասնագիտական իրավաբանական խորհրդատվությանը, իսկ «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով գնահատող հանձնաժողովը, որը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պարտավոր է ներկայացնել հրավերի վերաբերյալ պարզաբանում, չունի անհրաժեշտ մասնագիտական իրավաբանական գիտելիքներ, ինչպես չունի դրանք ունենալու պարտավորություն:

Պատվիրատուն գտնում է, որ բողոքաբեր կազմակերպության հարցումը դուրս է Հրավերի բովանդակության շրջանակից, միևնույն ժամանակ վերջինս զրկված չի եղել նշված հարցի վերաբերյալ անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն ստանալու հնարավորությունից և նշված հարցի վերաբերյալ բողոքաբեր կազմակերպության շահարկվող անդրադարձը կրում է ձևական և ոչ թե բովանդակային բնույթ:

Պատվիրատուն հայտնել է, որ բողոքաբեր կազմակերպությունը, պարզաբանման համար էլեկտրոնային փոստով Պատվիրատուի գնման համակարգողին դիմել է 2014թ. հունվարի 24-ի ժամը 16:46 (Երևանի ժամանակով): Դրան հաջորդող երեք օրացուցային օրերը «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի թիվ 1265-Ն որոշման համապատասխան դրույթների համաձայն հանդիսանում էին ոչ աշխատանքային:

Պատվիրատուն նշել է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ և 330-րդ հոդվածների և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ և 84-րդ հոդվածների պահանջների, մասնակցի հարցման վերաբերյալ պարզաբանում պարտավոր էր տրամադրել 2014թ. հունվարի 29-ին մինչև ժամը 18:00: Գնման ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2014թ. հունվարի 29-ի ժամը 12:00-ին, ուստի Պատվիրատուի պնդմամբ մասնակցի հարցման վերաբերյալ պարզաբանում տրամադրելը կարող էր դիտվել միայն որպես ձևական մոտեցում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարզաբանման բովանդակությունը արդեն իսկ կորցրել էր իր արդիականությունը, և չէր կարող որևէ փաստական և/կամ իրավաբանական նշանակություն ունենալ մասնակցի համար:

1-ին կետի վերաբերյալ.

Բողոքաբեր ընկերության աշխատակից Մոլինա Ալվարեսը 24.01.2014թ. ժամը 15:03-ին cmolina@senasa.es էլեկտրոնային փոստի հասցեից armen.ghazaryan@armats.am և hasmik.hakobyan@armats.am էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկված հաղորդագրությամբ նշել է, որ «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով բաց ընթացակարգի փաստաթղթերի առաքման վերջնաժամկետը մարտի 27-ը ժամը 12:00-ն է և ընկերության առաքիչը չի կարողանա երկուշաբթի առաքել այն, քանի որ Երևանում այդ օրը տոնական (ոչ աշխատանքային) օր է, ուստի Բողոքաբեր ընկերության ներկայացուցիչը կգործուղվի Հայաստան դրանք առձեռն փոխանցելու համար՝ խնդրելով նաև տեղեկատվություն տալ այն մասին, թե արդյոք 27.01.2014թ. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն կգործի և այնտեղ կլինի համապատասխան մեկը, ում հնարավոր կլինի փոխանցել փաստաթղթերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ

կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

«ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բանակի օրը նշվում է հունվարի 28-ին և ոչ աշխատանքային օր է:

ՀՀ կառավարության 21.11.2013թ. «Աշխատանքային օրերը տեղափոխելու մասին» N 1265-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ 2014 թվականի հունվարի 27-ի աշխատանքային օրը տեղափոխվել է 2014 թվականի փետրվարի 1-ը՝ շաբաթ օրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Հրավերի 3.1 կետի համաձայն՝ մասնակիցն իրավունքի ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

Գտնում ենք, որ Բողոքաբեր ընկերության կողմից 24.01.2014թ. ժամը 15:03-ին էլեկտրոնային նամակով Պատվիրատուից «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-03/14» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի պարզաբանումը պահանջվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետի պահպանմամբ, քանի որ Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է հանդիսացել 29.01.2014թ. ժամը 12:00-ն և Հրավերի պարզաբանման պահանջն, ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածով սահմանված ժամկետի վերջին օրը գործողություններ կատարելու կարգի, կարող էր ներկայացվել 24.01.2014թ. մինչև ժամը 18:00-ն (29.01.2014թ. ժամը 12:00-ից հաշված 5 օրացուցային օր առաջ):

Այսինքն, Պատվիրատուն, հրավերի պարզաբանում չտրամադրելով, Բողոքաբեր ընկերությանը զրկել է հայտերի ներկայացման վերջնաժամկետին իրազեկ լինելու

հնարավորությունից, որի արդյունքում խախտվել է Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով և Հրավերի 3.1 կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որի համաձայն պարզաբանումը վերաբերում է մասնագիտական իրավաբանական խորհրդատվությանը, իսկ «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով գնահատող հանձնաժողովը, որը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պարտավոր է ներկայացնել հրավերի վերաբերյալ պարզաբանում, չունի անհրաժեշտ մասնագիտական իրավաբանական գիտելիքներ, ինչպես նաև չունի դրանք ունենալու պարտավորություն, ապա գտնում ենք, որ Բողոքաբեր ընկերության կողմից պահանջված պարզաբանման խնդրանքում առկա չէ որևէ իրավաբանական խորհրդատվություն պարունակող տարր և այն բացառապես վերաբերել է Հրավերի 4.2 կետով նախատեսված հայտը ներկայացնելու ժամկետին:

2. Բողոքաբեր ընկերությունը 18.02.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ներկայացրել է միայն մեկ առաջարկ, որը հասել է երկու տարբեր ծրարներով: Առաքման ծառայության միջոցով ուղարկել է իր առաջարկը և երբ տեղեկացել է, որ Հայաստանում հունվարի 27-ը և 28-ը տոնական, ոչ աշխատանքային օրեր են, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ից վերջնաժամկետի հետ կապված պարզաբանում է պահանջել և, քանի որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն վերջնաժամկետի հետ կապված պարզաբանում չի տվել, Բողոքաբեր ընկերությունը Պատվիրատուին տեղեկացրել է, որ իր ներկայացուցչին է գործուղում Հայաստան՝ անձամբ հանձնելու այն նույն առաջարկը, որը կհասնի նաև DHL ընկերության միջոցով:

Պատվիրատուն հայտնել է, որ 29.01.2014թ. ժամը 10:45-ին «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի լիազորված անձի կողմից գնման ընթացակարգի քարտուղար Հ. Հակոբյանին առձեռն հանձնվել է ծրար, որը գրանցվել է գրանցամատյանում: Նույն օրը ժամը 11:55-ին փոստային առաքմամբ վերոնշյալ կազմակերպության կողմից ստացվել է ևս մեկ ծրար: Քանի որ «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից ստացվել է երկու ծրար, գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է՝ առաջացած խնդրի լուծման համար անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով:

Հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքում նշված հարցի վերաբերյալ հստակ ձևակերպումների բացակայությունը, գնումների համակարգող Հ. Հակոբյանը մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով հեռախոսազանգով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նույն գնման ընթացակարգին միևնույն կազմակերպության կողմից ներկայացված երկու ծրարների ներկայացման դեպքում գնահատող հանձնաժողովի գործողությունների վերաբերյալ: «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ից նշված հարցին ի պատասխան խորհուրդ է տրվել ծրարները չբացել, իսկ հայտը մերժել:

2-րդ կետի վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտը հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա,

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք,
- 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձին (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված

անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ,

Օրենքի 28-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի համաձայն՝ մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը,
- 3-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է նույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից:

Հրավերով սահմանվել է, որ արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Գտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումը վերաբերում է ոչ թե միևնույն անձի (մասնակցի) կողմից ներկայացված մի քանի հայտերին, այլ միևնույն անձի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձին պատկանող բաժնեմաս ունեցող մի քանի անձանց (մասնակիցների) միաժամանակյա մասնակցությանը գնման միևնույն

գործընթացին: Տվյալ դեպքում գնման գործընթացի մասնակից է հանդիսացել մեկ կազմակերպություն և ներկայացրել է երկու հայտ, որոնք պատվիրատուի կողմից մերժվել են և առանց բացվելու վերադարձվել են, ինչը Պատվիրատուի կողմից հրավերի պարզաբանում չտրամադրելու հետևանք է: Արդյունքում խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքները:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պատճառաբանությանը, որ գնումների համակարգող Հ. Հակոբյանը մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով հեռախոսազանգով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նույն գնման ընթացակարգին միևնույն կազմակերպության կողմից ներկայացված երկու ծրարների ներկայացման դեպքում գնահատող հանձնաժողովի գործողությունների վերաբերյալ և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ից նշված հարցին ի պատասխան խորհուրդ է տրվել ծրարները չբացել, իսկ հայտը մերժել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն չի համապատասխանում իրականությանը, քանի որ նշված խնդրի վերաբերյալ Կենտրոնի թեժ գծին 29.01.2014թ. ժամը 14:20 սահմաններում Պատվիրատուի կողմից ստացված խորհրդատվությանը պատասխանելու նպատակով Կենտրոնի մասնագետը Պատվիրատուի հետ հետադարձ կապ հաստատելու և հարցին պատասխանելու համար խնդրել է տրամադրել հեռախոսահամար, սակայն պատասխան հեռախոսազանգից հետո Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Բողոքաբեր ընկերության հայտն արդեն իսկ մերժված է և որևէ խորհրդատվության կարիք Պատվիրատուն այլևս չունի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը, առաջարկում ենք «Օդային նավիգացիա և ավիացիոն անվտանգության ծառայություններ ու ուսումնասիրություններ» ՓԲԸ-ի կողմից 18.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2014թ. «Ալմոնդ» ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին թիվ 2 և «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից ՕԵԿ (Օդային երթևեկության կառավարում) կարգավարների ընդհանուր մասնագիտական և

վթարային իրավիճակներում հատուկ վարժանքի կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀԱՆ-ԲԸԾՁԲ-04/13» ծածկագրով բաց ընթացակարգ հայտարարելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ Ա. Հակոբյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-05/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Եղիազարյան